

ԱՎԵՆԱՐԿ

ՅԱՂԹԱՆԱԿԸ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ Է

Նացիական Գերմանիոյ ղեկավար Ատոլֆ Հիթլերի կողմէ շրջապագերծուած պատերազմը երոպական պետութիւններուն դէմ առաջնորդեց Համաշխարհային Բ. կործանարար պատերազմին, որուն հետեւեալը քայլ մը, հաստատելով Միացեալ Ազգերու կազմակերպութիւնը, զայն նկատելով կառոյց մը, որ ապագային պիտի խնայէր աշխարհին հարցերը պատերազմով լուծելու աները:

Աւելին, ՄԱԿը պիտի վերածուէր միջազգային օրէնքին հսկող հաստատութեան, որ պիտի շարունակէր զարգացնել, նոր հորիզոններ բացալ եւ նոր արժեքներ ներմուծել այդ օրէնքէն ներս:

Այլ խօսքով, աշխարհի ժողովուրդները կը յուսային աւերիչ աշխարհամարտէ մը ետք, աշխարհը տեսնել աւելի մարդկայնական, իսկ աշխարհի ղեկավարները՝ աւելի շրջապայեաց ու անցեալի փորձառութենէն դասեր քաղած հասունութեամբ:

Այս յոյսը ունեին մանաւանդ տկար եւ իրաւագրկուած, ազատութենէն եւ անկախութենէն զրկուած ժողովուրդները, ազգային ու մարդկային իրենց իրաւունքները ոտնակոխուած հաւաքակազմութիւնները, որոնք հոն կը տեսնէին արժանապատիւ կեանք մը, ազատօրէն ապրելու ապաւեճ մը:

Յոյսը մեծ էր յատկապէս պետութիւններու միջեւ հարցերը խաղաղ միջոցներով լուծելու տեսակետէն, մերժելով պատերազմի ընտրանքը, եւ զայն նկատելու կարելիութիւն այն պարագային միայն, երբ ՄԱԿը համաձայնութիւն կը գոյացնէ այս գծով, սպառնել ետք կարելի խաղաղ բոլոր միջոցները:

Անցնող 58 տարիներուն այս յոյսը մնաց ու զարգացաւ, հակառակ այն իրողութեան, որ կենդանի հարցեր մնացին, պատերազմներ տեղի ունեցան, աւերներ գործուեցան, բայց նոյն ատեն այլապէս գաղութատիրութիւնը ջնջուեցաւ, ստրկատիրութեան շրջանները քանդուեցան, պետութիւններ անկախացան, ժողովուրդներ քանդեցին օտար բռնակալին ուժը:

Մարդկայնական աշխարհի մը յոյսը փոքր չափերով յառաջ սկսած էր երթալ:

Մինչ երեկ... Երբ, ՄԱԿի գորաւորագոյն անդամը՝ Մ. Նահանգներ որոշեցին աշխարհը իրենց կառքին լծել եւ յարձակուիմ շրջապագերծել Իրաքի դէմ, առանց ՄԱԿի արտօնութեան, լուր համաձայնութեան կամ նոյնիսկ անտարբեր մեղակցութեան: Եւ «ստեղծելով» պատճառներ (թէ՛ պատերազմներ), Մ. Նահանգներ Եւրոպայի իրենց կարգ մը դաշնակիցներուն հետ Իրաքը նկատեցին աշխարհի խաղաղութեան եւ անգործութեան սպառնացող վտանգ ու անհրաժեշտ նկատեցին պատժել զայն, «գիտակցելով» մարդկութիւնը չարիքէն փրկելու իրենց «պարտաւորութեան»:

Մ. Նահանգներ պատիճ գամեցին միջազգային օրէնքը, մարդկային սկզբունքները, իրաւունքները, հարցերը խաղաղ միջոցներով լուծելու պարտաւորութիւնը, բարձրաձայն յայտարարելով, թէ «ուժը մերն է, մե՛նք կ'որոշենք»:

Ու քանդուեցաւ ժողովուրդներու յոյսը: Քանդուեցաւ արժանապատիւ կեանք մը ապրելու երազը:

Բայց մանաւանդ քանդուեցաւ մարդուն հաւատը: Հաւատը խաղաղութեան, գոյակցութեան, հաւատը մարդկային իրաւունքներու եւ բարոյական սկզբունքներու, հաւատը՝ արդարութեան եւ պետութիւններու միջեւ հաւասարութեան, հաւատը՝ անտարի օրէնքին դէմ:

Եւ դժբախտաբար ամենապարզ քաղաքացին անգամ հասկցաւ, թէ միջազգային օրէնքը, մարդկային իրաւունքներն ու բարոյական սկզբունքները աղքատին, ճնշուածին, իրաւագրկուածին համար են միայն, իսկ անոնց խախտումը՝ ուժեղին, գորաւորին «իրաւունքը»:

Վաղը կրնայ վերջ գտնել Իրաքի պատերազմը: Մ. Նահանգներ եւ իրենց դաշնակիցները կրնան յաղթական դուրս գալ:

Մեծագոյն պարտեալը կ'ըլլան սակայն յոյսը, հաւատը, միջազգային օրէնքը, բարոյական սկզբունքը:

Իսկ ամէնէն աւելին՝ ճշմարտութիւնը: Եւ դեռ մտածել, որ ի՛նչպէս կարելի է նոր յոյս ու հաւատը ընծայել գալիք սերունդներուն...

Հոն արդէն պարտուած են աշխարհի հզօրները:

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ նախագահ Նեպիհ Պըրրի երէկ վերահաստատեց իր դատապարտումը Իրաքի դէմ ամերիկեան պատերազմին եւ նկատել տուաւ, որ անիկա ունի յետին նպատակներ եւ չի բաւարարուիր միայն Իրաքով, այլ կ'ընդգրկէ արաբական ամբողջ աշխարհը:

Միւս կողմէ, Պըրրի խստի քննադատեց Լիբանանի մէջ դեսպանատուներու եւ օտար պետութեանց մշակութային ու դիւանագիտական կեդրոններու դէմ կատարուած յարձակումները, շեշտելով, որ այդ արարքները կը վնասեն Իրաքի եւ ոչ մէկ ձեռով կը ծառայեն Իրաքի դէմ ամերիկեան պատերազմի դատապարտումին:

● ՈՒԺՄԱՆԻԹԻ Եւ ջուրի հարցերու նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պայտուն երէկ ընդունեց երեսփոխաններ Մանսուր Պոնըր Եւ Ժիհատ Մամաւը, որոնց հետ քննարկեց տեղական եւ շրջանային զարգացումները եւ բարգաւաճման հարցեր: Պայտուն պահանջեց էլեկտրականութեան հոսանքի ընդհատումին հարցը լուծել եւ օրական քանչորս ժամ էլեկտրականութիւն հայթայթել:

● ՍՇՆԱՍԱՆՔԻ նախարար Ալի Քանսո երէկ ընդունեց 24 ճամբորդ ընդգրկող օթոպիւսներու վարորդներու սենտիքայի մէկ պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ սենտիքայի ընդհանուր քարտուղար Իմատ Տէկիրմէնձեանի: Քննարկուեցան օթոպիւսներու վարորդներու իրաւունքներուն առնչուող հարցեր: Վարորդները յայտնեցին, որ իրենք կը մերժեն կառավարութեան հաստուցումները, շեշտելով, որ մալուրով բանող օթոպիւսներու գործածութիւնը արգիւելը համապատասխան արդար լուծում մը չէ:

Նշեալ հարցով Քանսո խորհրդարանին լղեց առաջարկ մը՝ վերատեսութեան ենթարկել կամ բարեփոխել օթոպիւսներու առնչուող օրինագիծը:

● ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ Նասրալլա Պուրոս Սֆէյր պատրիարքը երէկ Պեքրէի մէջ ընդունեց պետական նախարար Միշէլ Ֆարաճը, նախկին նախարար Էլիաս Խապէնը, լիբանանեան եւ պաղեստինեան կուսակցութիւններու ղեկավարներու ժողովէն բխած մարմինի մէկ պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Աշխատաւորներու Լիկայի ընդհանուր քարտուղար Չահէր Խաթիպի, ինչպէս նաեւ շարք մը երեսփոխաններ:

Հանդիպումին քննարկուեցան շրջանային զարգացումներն ու ընդհանուր իրադարձութիւնները:

● ՊՈՒՐԸ ՀԱՄՈՒՅԻ Առեւտրականներու Միութիւնը, միութեան նախագահ Փօլ Այանեանի գլխաւորութեամբ գումարեց ժողով մը, որուն ընթացքին կոչ ուղղեց մշակել քաղաքական, տնտեսական, առեւտրական եւ ընկերային ծրագիր մը՝ հսկելու համար շուկային, որպէսզի առեւտուրը ընթանայ բնականոն ձեռով, առանց ազդուելու Իրաքի դէմ մղուող ամերիկեան պատերազմին:

● ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ միւֆթի շէյխ Մոհամէտ Ռաշիտ Քապպանի երէկ ընդունեց պետական նախարար Միշէլ Ֆարաճը, որուն հետ քննարկեց Իրաքի դէմ պատերազմին զարգացումները: Ֆարաճը յայտնեց, որ տագնապալի վիճակը կը պահանջէ պատուութիւն եւ պատասխանատուութիւն: Ան աւելցուց, որ պատերազմը տնտեսապէս պիտի ազդէ Լիբանանի եւ երոպական երկիրներու վրայ:

Arabic header with logos: البيرق, السبق, المستقبل, الزيار, النجم, السفير

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Իրաքեան պատերազմն ու անոր վարգացումները, պատերազմին դէմ աշխարհի չորս ծագերուն տեղի ունեցող բողոքներն ու խաղաղութեան կոչերը, նախագահներ Պաշար Սաստի եւ Ժաք Շիրաքի հեռաձայնային հաղորդակցութիւնը կը հանդիսանան լիբանանեան օրաթերթերուն երէկուան գլխաւոր լուրերը:

«Նախար» գրած է, թէ Պուշ 75 միլիարտ տոլար կը պահանջէ պատերազմը ֆինանսաւորելու համար, իսկ Ռամաֆէլտ դիտել տուաւ, թէ անիկա երկարատեւ պիտի ըլլայ: Ըստ թերթին, Պարաշի մէջ ինթիֆատ կազմակերպելու հեթաթը կը հերքուի Պաղտատի կողմէ: Լիբանանի մէջ Բրիտանիոյ դեսպանատան առջեւ կատարուած ցոյցին ընթացքին տասնեակներով վիրատուներ արձանագրուեցան, գրած է օրաթերթը: Անոր համաձայն, իրաքցիները խախտեցին բոլոր նախատեսութիւնները, իսկ անոնց կորովը սկսաւ բարձրանալ:

Թերթը նաեւ լուսարձակեց տակառած այն պարագան, թէ պատերազմը սաստկացուց Միացեալ Մեհանգներու եւ աշխարհի միջեւ եղած հակադրութիւնը եւ իր դրոշմը ձգեց Ռուլ Սթրիթ վրայ: Ամերիկեան - թրքական բանակցութիւնները ձախողեցան, իսկ Եւրոպայ կ'առաջին գործողութիւնը օժանդակելու օժանդակութիւնները, նշած է թերթը:

«Սաֆիր» գրած է, թէ Պուշ պատերազմի վեց ամսուան նիւթական նախահաշի կը պահանջէ, իսկ ՄԱԿը Ապահովութեան խորհուրդը 26 Մարտին կը քննարկէ «Իրաքեան վարչակարգի» խնդիրը:

Թերթը նշած է, թէ պաշտպանութեան փոխ նախարար Վուֆօյից ըսած է, որ իրաքցիները իրենք պիտի տապալեն Սաստամը:

«Սաֆիր»ի համաձայն, հապարաւոր ցուցարարներ Իրաքի զօրակցելու համար ուղղուեցան Թանգարանէն Էսրուս: Բախումներ տեղի ունեցան Բրիտանիոյ դեսպանատան առջեւ եւ յետ միջամտութիւններու արտադրութիւնները պոլիթի ենթարկելու կոչերով:

«Պայրաք» նշած է, թէ Պուշ եւ Ռամաֆէլտ յայտարարեցին, որ Իրաքեան վարչակարգը սկսած է կորսնցնել իրաքեան հողերուն վրայ իր տիրապետութիւնը: Պարաշի մէջ բախումներ տեղի ունեցան, իսկ ամերիկացիները ընդունեցին, որ ամերիկեան երկու օդանւթներ վար առնուած են:

Թերթը գրած է, թէ Ռաշիկթըն տեղեակ չէր Մեհանգներու Լիբանոյ ներկայացուցած խաղաղութեան առաջարկներէն, իսկ Ռուսիա եւ Եգիպտոս կը պահանջեն պատերազմին կասեցումը:

Ըստ թերթին, Պըրրի յայտարարեց, որ եթէ արաքները պատերազմին դէմ միակամ կեցուածք որդեգրէին, պատերազմ տեղի չէր ունենար:

«Իրաքի աւապները կը պարտուեն դաշնակից ուժերը, իսկ իրաքեան հակաօդայինները վար կ'առնեն 3 ուղղաթիւներ»: «Ֆրանսուսա ցաւ կը յայտնէ սուրիական բեռնակառքի մը ուժակոծումին համար», գրած է «Քիֆաի Արապի» օրաթերթը:

«Տիար» նշած է, թէ ամերիկեան ղեկավարութիւնը խուճապի մատուած է եւ կը խօսի պատերազմին շարքեր կամ ամիսներ տեւելու հաւանականութեան մասին: Իսրայէլացի սպաներ Քաթար մեկնեցան՝ թաղային կոնսուլներու թեքնիքները ամերիկեան ուժերուն տրվեցնելու համար, նշած է թերթը:

«Տիար»ի համաձայն, Պըրրի յայտարարեց, թէ Իրաքի դէմ պատերազմը ՄԱԿի ուղղուած փամփուշտ մըն է:

Թերթը նաեւ լուսարձակեց տակառած են Լիբանանի մէջ տիրող ցուրտ օդը, անձրեւներն ու ձիւնը, որ անգամ մը եւս մօտեցաւ ծովեկերեայ շրջաններուն եւ կարգ մը շրջաններու մէջ ամերիկեան փոխուումներ պատճառեց:

Advertisement for 'Խեղացի Մարդը' (The Thief) featuring a cat illustration and text: ՀԱՅ ԱԻՏՏ. Փ. ԵՒ Է. ԹՈՐՈՍԵԱՆ ՄԻԶՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ Կը ներկայացնէ Թատերագիր - Բեմադրիչ՝ Ռուպերտ Առաքելեանի Խեղացի Մարդը Երաժշտական Կատակերգութիւնը (հետեւողութեամբ Յովհ. Թումանեանի Անխել Բարդը Հեթաթին) Երաժշտութեան Հեղինակ՝ Վեր. Ներսէս Պալապանեան

Advertisement for 'ԱԶՍԱՍԱՐՏ' (AZSUSARS) featuring a logo and text: «ԱԶՍԱՍԱՐՏ» ԱԿՈՒՄԲ ԿԵՍՕՐՈՒՄՆ ԸՍԸ (ՄԱՅԱՏԻՅԷ) Պատրաստութեամբ ԱԿՈՒՄԲԻ ՊԻՏԻՅԷ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻՆ Կիրակի, 30 Մարտ 2003, կեսօրուան ժամը 1:00ին, «Ազատամարտ» ակումբի «Չուխատարեան» սրահին մէջ: Ծաշի ընթացքին պիտի ցուցադրուի մենախօսող (մոնոլոկ) ՎԱՇԷ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ տեսաերգը: •Տեղերը ապահովել կանխաւ, հեռաձայնով 01-449924 թիւով:

Advertisement for 'Ուրբաթ 28 Մարտ 2003, Յովհ. Պօղոսեան Թատերասրահ' (Saturday 28 March 2003, Hovh. Poghosyan Theatre) featuring a logo and text: Ուրբաթ 28 Մարտ 2003, Յովհ. Պօղոսեան Թատերասրահ Պուրճ Համուտ Աշակերտական՝ կ.ա. ժամը 11.00 Երեկոյեան՝ ժամը 8.30 Ծաբաթ, 29 Մարտ 2003, Երեկոյեան ժամը 7.00-ին Հետիկ սրահի մէջ, Այնճար Մուտքը տոմսով

Advertisement for 'ՀԱՐՑԱԶՈՐՈՅ՝ ԿԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՇԵՏ' (Harqazoroy: Ki Manoukheani Shets) featuring a logo and text: «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ» «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ» ՀԱՐՑԱԶՈՐՈՅ՝ ԿԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՇԵՏ Այսօր՝ Բնագաբթի, 27 Մարտ 2003, երեկոյեան ժամը 6:00ին ունկնդրեցէք երաժշտ ԿԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ հետ հարցազրոյց մը, որ ուղղակի պիտի ձայնաստորոհուի: Առոնք, որոնք կ'ուզեն խօսիլ ԿԻ Մանուկեանի հետ, կրնան հեռաձայնել 01/267657 եւ 01/241199 թիւերով:

ՆԵՐՈՒԺԻ ՅԱՆԿԱԳՐՈՒՄԸ Ո՞Վ ՊԻՏԻ ԸՆԷ

Սփիւռքի հայութիւնը օտուտած է մարդկային ներուժի հսկայ պաշարով մը: Ամէն տեսակի հմուտութիւններու, մասնագիտութիւններու եւ փորձառութիւններու տեր անհատներու հսկայ բաճակ մը կայ: Հարցը այն է, թէ որքանով այդ ներուժը ի սպաս կը դրուի ազգին՝ Հայրենիքի թէ Սփիւռքի կարիքներուն հասնելու:

Արդարեւ, բոլոր ասպարէզներուն մէջ, աշխարհի տարածքով, հազարաւոր հայ մարդիկ առաջատար տեղ կը գրաւեն իրենց մասնագիտութիւններուն մէջ: Չկայ ասպարէզ մը՝ առեւտուրի, գիտութեան, բժշկութեան, իրաւաբանութեան, գործավարութեան, ճարտարապետութեան, կրթութեան, արւեստներու թէ այլ մարզերէ ներս, ուր թէ՛ վաստակաւոր եւ թէ՛ նորընծայ հայտորդիներ իրենց տեղը գրաւած չըլլան:

Ինչպէս Հայաստանի, նոյնպէս եւ Սփիւռքի բոլոր գաղութներուն մէջ կայ այդ ներուժը, սակայն չկայ կազմակերպութիւն մը, հաստատութիւն մը, որ ցանկագրած ու դասաւորած ըլլայ անոր բաղկացուցիչ տարրերը՝ անհատները, իրենց հասցէներով, հեռավորութիւններով, ել-հասցէներով, մասնագիտութեամբ, տարիքով, եւ այլ անհրաժեշտ տեղեկութիւններով:

Նման տեղեկատու արխիւ կազմելու շատ փորձեր եղած են ու կ'ըլլան, բայց բոլորն ալ ունին մասնակի բնույթ: Օրինակ, շրջան մը Համագայակներ փորձեց այդպիսի ցանկեր կազմել, գործը հասաւ մինչեւ տեղ մը, ապա իր բարդութեան պատճառով կանգ առաւ: Քանի մը տարի (թերեւս երկու միայն) ուրիշ մը հրատարակեց՝ «Ո՞վ է Ես» կամ անոր նման վերանայով ցանկ մը, ապա դադարեցաւ այդ եւս: Գետ վերջերս Հայաստանէ փորձ մը եղաւ «Հայրենիք-Սփիւռք» կազմակերպութեան կողմէ, տեղեկակ չեղանք, որ յաջողեցաւ, թէ ոչ:

Ուրիշներ տեղեկեցին մասնակի ցանկեր, օրինակ՝ բժիշկներու եւ այլ ասպարէզներու, ոսկերիչներու, եւ այլն:

Այս ներուժը, սակայն, միայն մարդկային մեր հարստութիւնը, մարդուժը չէ, որ կ'ընդգրկէ, այլեւ կազմակերպական մեր կարողականութիւնը: Ինչ տեսակի կազմակերպութիւններ ունի հայութիւնը կազմակերպական, կրօնական, մշակութային, արհեստակցական, եւ այլն: Անոնք եւս ընդհանրութեան համար անհասանելի կը մնան յաճախ: Եթէ վերջերս կազմուեցաւ Սփիւռքի հայ դպրոցներուն ցանկը եւ դրուեցաւ համացանցին վրայ («Երեք նուր») կազմակերպութեան կողմէ, ուր եւս միւս կազմակերպութիւններուն ցուցակները: Կ'ըն, եւ լուր չուր՝ նր, թէ այս բոլորը ի մի բերելու, համագործելու, նոյն կայքէջին վրայ ամփոփելու փորձ ընող եղաւ. տեղեկակ չեմ: Կ'արժէ այս մասին բարձրաձայն մտածել. ո՞վ պիտի ստանձնէ նման նախագիտութիւն:

Այս հարցումին պատասխան մը որոնելէ առաջ, սակայն, փորձեց պատկերացնել, թէ ինչն է, ինչ տեսակ ցանկեր տեղ կրնան գրաւել նման աշխատանքի մը մէջ:

Ահա, առանց մասնաւոր առաջնահերթութեան՝ մարդկային ներուժի ոչ-ամբողջական ցուցակագրում մը.

- Մտաւորականներ՝ գրող, ուսուցիչ, գիտնական, խմբագիր, լրագրող, դասախօս, գիտաշխատող.
- Արտեստագետներ՝ երաժիշտ, նկարիչ, դերասան, քանդակագործ, բեմադրիչ.
- Մասնագետներ՝ բժիշկ, դեղագործ, ճարտարագետ, ճարտարապետ, համակարգչագետ, գործավար.
- Գործարարներ, առեւտրականներ, շինարարներ, արհեստավարներ.
- Բարերարներ:

Կարելի է ընդգրկուց, ամբողջական շրջանակ մը կազմել ու հոն ներառել գործի բոլոր ասպարէզները, այդ ասպարէզներուն մէջ արդէն իսկ հաստատուած կամ նոր հաստատուող բոլոր անհատներ:

Ինչ կը վերաբերի կազմակերպութիւններուն, անոնք ալ կրնան ընդգրկել.

- Թեմական կառույցները, եկեղեցիները, դպրոցները, կեդրոնները.
- Միութիւններն ու կուսակցութիւնները.
- Արհեստակցական միութիւնները.
- Հայրենակցական միութիւնները.
- Թերթերը, ձայնասփիւռի, հեռառեսիլի կայանները.
- Կայքէջերը.
- Եւ այլն:

Վերագոնալով մեր դրած առաջին հարցին. ո՞վ պիտի նախաձեռնէ այս գործին ու կազմէ նման ամբողջական ցուցակագրում մը, զայն մատչելի դարձրնէ հանրութեան: Կասկած չկայ, որ այս աշխատանքը բոլորին պիտի ծառայէ, բոլորը պիտի օգտուին անկէ, անոր առաւելութիւններէն:

Բնական չէ՞ արդեօք, որ առաջարկուի, որ բոլոր իրենց մասնակցութիւնը բերեն ու գործակցին նման նախաձեռնութիւն մը իրագործելու համար: Իսկ ո՞վ պիտի ըլլայ գործը համադրելու, անոր իրականացման անհրաժեշտ մանրամասնութիւններով զբաղելու պատասխանատուութիւնը վերցնողը: Ո՞վ պիտի ըլլայ... նիւթականը հայթայթողը: Ահա հարցեր, որոնք պէտք է լուծուին եթէ պարզ առաջարկէն պիտի հասնինք շոշափելի գործի:

Եկեղեցիները միասնաբար: Կուսակցութիւնները՝ միասնաբար: Բարեգործական միութիւնները՝ միասնաբար: Հայրենի պետութիւնը՝ իր այլազան նախարարութիւններու գործակցութեամբ, կամ յատուկ տեսութեան մը միջոցով, որուն մէջ ըլլան նաեւ Սփիւռքի կարեւոր կազմակերպութիւններու ներկայացուցիչները:

Թերեւս «Հայաստան» համահայկական հիմնադրամը, որ նման կառույց ունի արդէն, եւ որ նիւթականի կողքին կրնայ նաեւ մեր ներուժի հիմնադրամը գոյացնել...

Ո՞վ պիտի ընէ. հարցը կը մնայ:

ՎԲԵԺ-ԱՐՄԵՆ

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱԸՆԱԳՆԵՐ

ՀՕՄԻ ՆՈՐ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԻ ԲԱՅՈՒՄ

ՀՕՄԻ Արեւմտեան Ամերիկայի կեդրոնատեղիին մէջ կատարուած է «Աստղիկ Շահինեան» գրասենեակի բացումն ու անուանակոչութիւնը՝ հովանաւորութեամբ Ալպէր Շահինեանի:

Բացման հանդիսութիւնը կատարած է Արեւմտեան Ամերիկայի թեմի առաջնորդ Մուշեղ եպօ. Մարտիրոսեան: ՀՕՄԻ Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութեան ատենապետ Սոնա Փելթեքեան խօսած է անժամանակօրէն կեանքէն հեռացած ՀՕՄԻ անդամ Աստղիկ Շահինեանի գործունէութեան եւ բարեգործութիւններուն մասին:

«Ասպարէզ» օրաթերթը այս առիթով նշած էր, թէ Աստղիկ Շահինեանի ամուսինը՝ Ալպէր Շահինեան, նորաբաց գրասենեակին իր 20 հազար տոլարի նուիրատուութեան հետ հանգուցեալ կնոջ անուամբ 2000 տոլարի կրթաթոշակ մը սահմանած է հայ աշակերտներուն օգնելու նպատակով:

ՖՐԱՍՍԱ

ՄԱՐՍԵՅԻ ՃԵՄԱՐԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ

«Համագայակին»ի Մարսէլի ճեմարանի շինարարութեան աշխատանքը կը շարունակուի: Այս գծով, անցեալ Դեկտեմբերին տեղի ունեցաւ ճաշկերպութիւն մը եւ շոշափելի գումար մը ձեռք ձգելէ ետք, սկսաւ նոր համալիրի կառուցման աշխատանքը:

Ի տես վարժարանին դիմագրուած դժուարութեան, Մարսէլի ճեմարանի խնամակալութեան տքնաձայն ու հետեւողական աշխատանքին շնորհիւ, տեղւոյն քաղաքապետութիւնը վարժարանին տրամագրութեան տակ զբաւ հողաշերտ մը:

Շինարարական գործնական աշխատանքները սկսած են ամիսներէ ի վեր:

«Համագայակին»ի կեդրոնական վարչութիւնը խոր հաւատքով ձեռնարկած է այս գործին, որովհետեւ համոզուած է, որ Եւրոպական Միութեան նման աշխարհագրական ու մշակութային իմաստով կարելի չըլլանի մը մէջ հայկական կրթութիւն ու դաստիարակութիւնը ջանքով ամբողջական ու արդիական երկրորդական վարժարանի մը գոյութիւնը խիստ կարեւոր ու անհրաժեշտ է:

Մարսէլի այս ճեմարանը հիմնուեցաւ 1980ին՝ մանկապարտէզի չորս աշակերտներով: Ժամանակի ընթացքին աշակերտներուն թիւը անցաւ 250ը: Տարուէ տարի զարգանալով՝ վերածուեցաւ երկրորդական վարժարանի: Սակայն աշակերտութեան թիւական աճին համեմատ, վարժարանին կառուցային յարմարութիւնները մնացած էին անբաւարար:

ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐ

«Ռատիօ Յրանս»ի նուագահանդէսներու 2002-2003 տարեշրջանի յայտագրի ներքին, վերջերս համերգ մը տուաւ Հայաստանի «Հայ երաժշտութեան վարպետներ» նուագախումբը՝ սոփրանօ Աննա Մայիլեանի մենբերութեամբ, «Ռատիօ-Յրանս»ի «Օլիվիէ Մեսեան» սրահին մէջ: Շուրջ 400 հանդիսատես-ուսնակիրներ, մեծամասնութեամբ ոչ հայեր, մազնիսացած ուշադրութեամբ հետեւեցան այս բացառիկ համերգին՝ զնահատելով իւրաքանչիւր երաժիշտի անհատական պատրաստութիւնն ու տաղանդը: Իսկ սոփրանօ Աննա Մայիլեանի թաւալային ձայնը հրապուրեց ամէնէն զգայուն ականջները:

Մէկուկէս ժամ տեւած այս յայտագրի ընթացքին մեկնաբանուեցան աւանդական 20 երգեր ու մեղեդիներ՝ 10էն 18ը դարը ընդգրկող ժամանակաշրջանէն, Գրիգոր Նարեկացիէն, Կոմիտասէն, Պաղտատար Դպիրէն ու այլազան ժողովրդական երգեր, պարեղանակներ ու միջնադարեան շարակներ:

Համաշխարհային երաժշտութեան մակարդակին՝ «Հայ երաժշտութեան վարպետները» լաւագոյն մեկնաբաններէն եղան հայ աւանդական երաժշտութեան, զոր կատարեցին արհեստավարժ բժախնդրութեամբ եւ հարազատութեամբ:

Նոյն կազմը մեծ յաջողութեամբ համերգ տուաւ նաեւ Փարիզի 9րդ թաղամասի քաղաքապետարանի «Ռոսինի» սրահին մէջ, նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ Յրանսահայ Մշակութային Միութեան, որ հաւատարիմ իր կոչումին, տարիներէ ի վեր կը քաջալերէ հայ արուեստը եւ կը ծանօթացնէ հայրենի արուեստագէտները:

PHOTO NERSES

(Արագ սպասարկութիւն - որակաւոր լուսանկարներ)

ՀԻՄՆԱԳՐՄԱՆ
25ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

36 photo ֆիլմի
նկարահանումը
միայն 8,000 լ. ո.

(Kodak Royal քարտի վրայ տպուած
եւ արդիական DIGITAL մեքենայի միջոցաւ)
... ԵՒ ՍՏԱՅԵԸ ՆԱԵՒ
Լուսանկարի նոր ֆիլմ մը + ալպոմ մը + նկարի
INDEX մը

Կը նկարենք փորձերու լուսանկարներ ՉԱՏԿՈՒՄՆ
յատուկ յարգարանքով

PHOTO NERSES: Պուրճ Լամուտ, Զաղաքապետարանի փողոց «Սանթրո ԱՐԻՆ»ի դիմաց:
Ըն. 01 - 261858 եւ 01 - 255992

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻՆ ԺԱՄԱՐ 5:00:

ՄԱՀԱՋԳՆԵՐԸ բացատրութիւն են: Մահագլ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՍԻՆՍԵ

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀՆՉԵՑԻՆ ՄԻՆՍՔԻ ԲԱՐԵՎԱՍՏՈՒԹԵԱՆ ՏԱՆ ՄԷՉ

«Արմէնփրէս» կը տեղեկացնէ, թէ հայ անուանի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանի ստեղծագործութեան նուիրուած էր վերջերս Մինսքի Բարեկամութեան Տան մէջ կայացած գրական երեկոյ մը:

Մինսքի «Արմէնփրէս»ի թղթակիցը կը տեղեկացնէ, որ Պիեռոուսիոյ մէջ Հայաստանի դեսպան Սուրէն Յարութիւնեան երեկոյի իր խօսքի ընթացքին Սիլվա Կապուտիկեանը նկատած է նախկին խորհրդային Միութեան ամէնէն սիրուած բանաստեղծուհիներէն մէկը՝ գոր մինչեւ այսօր կը գնահատեն ու կը մեծարեն: Ս. Յարութիւնեան կարգացած է Կապուտիկեանի «Մեր պանթէոնը» բանաստեղծութիւնը:

Պիեռոուսիոյ տեղեկատուութեան նախարար Միխայիլ Պոթեպային, որ կը գլխավորէ «պիեռոուս-Հայաստան» ընկերութիւնը, խօսած է պիեռոուսերու եւ հայերու պատմական ճակատագրի նոյնութեան մասին: Իսկ պիեռոուս բանաստեղծ Լէոնիտ Տրանքո Սոյսեռը Կապուտիկեանի նուիրած իր ելոյթը աւարտած է «Հայաստան, ես քեզ կը սիրեմ» խօսքերով:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱԸՆԱԳՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐՈՒ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՅՈՒՅԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան Փաստաթղթի մասնաճիւղի «Պոյաճեան» սրահին մէջ բացուեց կատարուած է կլենտէյաբնակ լրագրող ձորճ Աբէլեանի հայկական վանքերուն նուիրուած լուսանկարներու ցուցահանդէսին, որ կազմակերպուած է Կլենտէյի «Մաշտոց» քոլէճին հովանաւորութեամբ:

121 լուսանկարներէ բաղկացած ցուցահանդէսին մէջ ներկայացուած են Գանձասարը, Հաղբատը, Սանահինը, Գայիանէն, Գեղարդը եւ այլ կոթողներ:

ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆՏԻ 122ՐԳ ԹՈՒԻՉՔԸ

Միացեալ Հայկական Ֆոնտի 122րդ թուիչը Երեւան հասաւ 15 Մարտին՝ փոխդրելով 1,4 միլիոն արժողութեամբ մարդասիրական օգնութիւն:

Այս թուիչով Միացեալ Հայկական Ֆոնտը իր կողմէ տրամադրած է աւելի քան 719 հազար տոլար արժողութեամբ դեղորայք եւ բժշկական պիտոյքներ, զորս նուիրած էր կաթողիկէ բժշկական առաքելութեան վարչութիւնը:

Այլ կազմակերպութիւններ եւս ապրանքներ նուիրելով մասնակցեցան այս թուիչին: Այս կազմակերպութիւններէն եւ անհատներէն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան մասնակցած է 136 հազար տոլարով, Նորթ-Մարաշ բժշկական կեդրոնը՝ 125 հազար տոլարով, Հայկական Օգնութեան Ֆոնտը՝ 111 հազար տոլարով, Քալիֆորնիայէն բժիշկ Էմիլ Տիւնիսեան՝ 61 հազար տոլարով եւ Հատուրտ Գարսիլիօզեան յիշատակի ընկերութիւնը՝ 45 հազար տոլարով:

Ապրանքներու նուիրատուութեամբ իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Նիւ Ճըրճիէն Յարութ Շահինեան՝ 30 հազար տոլար, Հայ Օգնութեան Միութիւնը՝ 25 հազար տոլար, Քանաւազայ Բժշկական Ընկերակցութիւնը՝ 20 հազար տոլար, Հայաստանի Ամերիկեան Համալսարանը՝ 16 հազար տոլար, Միացեալ Նահանգներու Երկրագործութեան նախարարութիւնը՝ 15 հազար տոլար, Միացեալ Նահանգներու «Մէյնթ Վինսթըն» հիւանդանոցը՝ 14 հազար տոլար, Քեպէլէի Հայ Բժշկական Ընկերակցութիւնը՝ 12 հազար տոլար, «Բժշկական Օգնութիւն Հայերուն» կազմակերպութիւնը՝ 11 հազար տոլար եւ Ամերիկահայ Առողջապահական Ընկերակցութիւնը՝ 10 հազար տոլար:

Յայտնենք, որ 1989էն ի վեր Միացեալ Հայկական Ֆոնտը 122 թուիչներով եւ 915 բեռնարկներով 351 միլիոն տոլարի արժողութեամբ մարդասիրական նպաստ ուղարկած է Հայաստան:

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԷ

ԿԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ



ՈՒՐԲԱԹ, 28 ՄԱՐՏ 2003, ԵՐԵՎԱՆԻ ժԱՄԱՐ 8:30ԻՆ
«ԻՆՏԵՐՆԵՐ»Ի ՍՐԱԿԻՆ ՄԷՉ
Տոմերը ստանալ հետեւեալ գրատուներն՝ «Նարեկացի» Պ. Լամուտ, «Համագայակ» Շաղաղեան կեդրոն եւ Ազգային վարժարաններն:

b studio ONE ԱՅՇԻԼ AFHIL

ՓՈՒՆԱԴԱՐՁ ՅԱՐԳԱՆՔԸ ՀԻՄՆԱՔԱՐՆ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌՈՂՋ ՄՇԱԿՈՅԹԻՆ

ԿՐՄԵ Ե. Յ. Դ. ԲԻՐՈՅԻ ԱՆԴԱՍ ԸՆԿ. ԿԻՔԵՆ Ա. ՅՈՎԱՆՓԵԱՆ
«ԱՍՊԱՐԵՁ»Ի ԸՆԹԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

ՀԱՐՑՈՒՄ.- Հաղորդուեցաւ, որ յառաջիկայ Մայիս 25ին կայացաւ շաբաթական խորհրդարանական ընտրութիւններուն Է. Յ. Դաշնակցութիւնը կը ներկայացայ իր ցանկով: Ի՞նչ է ցանկը ցանկի մը արտաքին յատկութիւնները:



ՊԱՏԱՍԽԱՆ.- Հայաստանի Ազգային ժողովի ընտրութիւններուն Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կը մասնակցի առանձին, իր ուրոյն ցանկով:

Այս մէկը սոսկ ընտրական քաղաքական կազմակերպութեամբ կազմուած ցանկ մը չէ, այլ, մեր համոզումով, երկրի վերջին շրջանի ընտրութեան նուիրուած քաղաքացիներէն բաղկացած ցանկ մը: Այս ցանկը կը ներկայացնէ իր յատկութեամբ միայն իր քաղաքական կարողութեամբ մէկը, երկրի մը, ուր Ազգային ժողովին դերն ու աշխատանքի որակը բարելաւման ու բարձրացման մեծ կարիք ունի: Մենք հարկ տուողները համամասնական ցանկին մէջ գտնուող անուններով, ընդամենը 101 հոգի, որոնք մէկ են մեր ազգին ու երկրին նուիրուած, կրթեալ, քաղաքական հասունութեան տէր անձեր: Յանկին միայն 70 տոկոսը կուսակցականներ են, իսկ միւսները նոյնքան յարգելի անձնաւորութիւններ, որոնք կը բաժնեն մեր քաղաքական ու ընկերային-սոցիալական փլայֆորմը:

Մարզերէն ներկայացուած են թեկնածուներուն 25 տոկոսը, իբրեւ փաստ՝ մեր աշխարհաքաղաքական կարողութեան, իսկ իւրաքանչիւր կերպով՝ ցանկին 25 տոկոսը կը պատկանի իր քաղաքական սեւերին, իբրեւ յաւելեալ փաստ մեր վարած ընկերային առողջ քաղաքականութեան:

Ընտրութիւններուն կը մասնակցին ճակատաբայ, ապաւինելով մեր կուսակցութեան Ծրագրին ու անոր ընտրական փլայֆորմին վայելած ժողովրդային զօրակցութեան:

Հ.- Ի՞նչպէս կ'արժեւորէք Հայաստանի քաղաքական մշակույթը՝ նախագահական ընտրութիւններուն ու յատկապէս ընդդիմութեան գործընթացը:

Պ.- Երկրի վարչապետն ու հարկաւորները միայն տնտեսական աճով չէ, որ կը չափուի եւ միայն անով չէ, որ իրականութեան կը դառնայ: Այլ նաեւ՝ պետական կառուցներուն եւ օրէնքներուն աստիճանական հասունացմամբ եւ մասնա-

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԿՐՈՒԹԵԱՆ
«Ազդակ» մէջ ազգային կամ անտնտրական ծանուցումներ հրատարակելու փափակներէն կը խնդրուի ծանուցումի գնագիրը ընթացիկ գիրով (հաստատութեան պարագային՝ մախրանաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատում) ներկայացնել «Ազդակ» ծանուցումներու գրասենեակը:

մտեն, իսկ ուրիշներ օտար երկիրներու դեսպանատուններու կամ հիւպատոսարաններու դիմաց ցոյցեր կազմակերպած են՝ բողոքելու այս վերջիններուն կառավարութեանց կողմէ նախագահ Քոչարեանի վերընտրութիւնը շնորհաւորած ըլլալուն դէմ:

Որքան ապանելի արարքներ են ասոնք եւ որքան մեծ հարուած կը հասցնեն մեր ազգային արժանապատուութեան: Դիմել օտար պետութեանց ու անոնց բանալի մեր ներազգային վէճերը անհրեժիլ քայլ է:

1994ին, երբ փորձ կատարուեցաւ արգելելու Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութիւնը (նոյնիսկ ներկայութիւնը) Հայաստանի մէջ, երբ մեր գրասենեակներն ու սպարանները ջարդուեցան, մեր ընկերներէն տասնեակներով ձերբակալուեցան, նոյնիսկ այդ դառն պայմաններուն մէջ մենք դուրսի աշխարհին չլինելու մասին իրար յարգելու օգտուած քաղաքական մեծամասնութիւնն ու փոքրամասնութիւնը գիտնան զիրար յարգելու ամէն բանէ առաջ՝ դուրս գալու երկրի կառուցման, երկրի ներքին ու արտաքին ապահովութեան վրայ:

Դաւաճանութեան համար արարք է այսօր Հայաստանի ներքին կեանքը ապակայունացնելու, զրգուիչ քայլերով ու կոչերով ժողովուրդի գոհեցնելու անհրաժեշտ հրահրելու բոլոր փորձերը: Պոլշեի կեանքի տիպի այդ արարքներուն հեղինակները կը փորձեն շահագործել ժողովուրդի ընկերային զգուշութիւնները եւ բարեպաշտ գանգոսները կ'առաջնորդեն արկածախնդրութեան:

Փոքրամասնութիւնը, ամէն պարագայի՝ ընդհանուրութիւնը - պէտք է ճանչնալ գիտնալ իր պարտութիւնը եւ յարգել մեծամասնութեան կամքը, մինչ մեծամասնութիւնը, իր կարգին, պէտք է գիտնալ յարգել փոքրամասնութիւնը ու զուգուրապէս անոր դերին ու կարծիքին վրայ: Այս է ժողովրդավարութիւնը եւ այս է այն զրոյթը, որ պէտք է դերի չէ Հայաստանի մէջ, եթէ մենք ընտրած ենք ժողովրդավարութիւնը:

Հ.- Ընդդիմութիւնը ցանկ օտար դուռեր կը բախէ: Այս քայլը որքանով կը համապատասխանի հայրենի շահերուն:

Պ.- Ժիշք է, կ'իմանանք, որ ոմանք արդէն դիմումներ կատարած են միջազգային հաստատութեանց, որպէսզի միջա-

մեր ազգային արժանապատուութեան: Դիմել օտար պետութեանց ու անոնց բանալի մեր ներազգային վէճերը անհրեժիլ քայլ է:

1994ին, երբ փորձ կատարուեցաւ արգելելու Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութիւնը (նոյնիսկ ներկայութիւնը) Հայաստանի մէջ, երբ մեր գրասենեակներն ու սպարանները ջարդուեցան, մեր ընկերներէն տասնեակներով ձերբակալուեցան, նոյնիսկ այդ դառն պայմաններուն մէջ մենք դուրսի աշխարհին չլինելու մասին իրար յարգելու օգտուած քաղաքական մեծամասնութիւնն ու փոքրամասնութիւնը գիտնան զիրար յարգելու ամէն բանէ առաջ՝ դուրս գալու երկրի կառուցման, երկրի ներքին ու արտաքին ապահովութեան վրայ:

Դաւաճանութեան համար արարք է այսօր Հայաստանի ներքին կեանքը ապակայունացնելու, զրգուիչ քայլերով ու կոչերով ժողովուրդի գոհեցնելու անհրաժեշտ հրահրելու բոլոր փորձերը: Պոլշեի կեանքի տիպի այդ արարքներուն հեղինակները կը փորձեն շահագործել ժողովուրդի ընկերային զգուշութիւնները եւ բարեպաշտ գանգոսները կ'առաջնորդեն արկածախնդրութեան:

Փոքրամասնութիւնը, ամէն պարագայի՝ ընդհանուրութիւնը - պէտք է ճանչնալ գիտնալ իր պարտութիւնը եւ յարգել մեծամասնութեան կամքը, մինչ մեծամասնութիւնը, իր կարգին, պէտք է գիտնալ յարգել փոքրամասնութիւնը ու զուգուրապէս անոր դերին ու կարծիքին վրայ: Այս է ժողովրդավարութիւնը եւ այս է այն զրոյթը, որ պէտք է դերի չէ Հայաստանի մէջ, եթէ մենք ընտրած ենք ժողովրդավարութիւնը:

Հ.- Կը խոսուի ընտրական խախտումներու մասին: Ի՞նչ է ձեր արժեւորումը այս գծով:

Պ.- Թէ երկուստեք խախտումներ ու կեղծիքներ եղած են, այդ մասին միմիայն դատարաններն ու երկրի օրէնսդրութիւնն է, որ իրաւունք ունին կարծիք յայտնելու: Այս է ժողովրդավարութեան կանոնը եւ գիտնալ: Ոչ ոք իրաւունք ունի կամ կրնայ ունենալ այս ու նման խնդիրներ լուծել փողոցներու մէջ, հանրահաւաքներու կամ ցոյցերու միջոցով:

Հայաստանի մէջ կայ Սահմանադրական դատարան եւ մինչեւ այդ կառույցին կողմէ քննարկուած բոլոր բողոքներուն, աններելի է կարծիք յայտնելու կամ խլրտում ստեղծելու: Եթէ երեսուց քայլ, որ եղած են խախտումներ, ապա պետասխանատուները պէտք է օրէնքով պատժուի խտտաբոյնս:

ԽՄԱԳՐԱԿԱՆ

ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԸ ԿԸ ՅԱՅՏՆԱԳՈՐԾԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԺԷՔՆ ՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Իր տեսակին մէջ ուշագրաւ եւ քաղաքական ու զաղափարախօսական առումներով խորհրդածութեան արժանի նախաձեռնութիւն մը եղաւ Ընկերվար Միջազգայնականի ընդհ. քարտուղար Լուի Այալայի Հայաստան այցելութիւնը: Մարտի 18 - 20, ընդառաջելով Միջազգայնականի լիիրաւ անդամի իր կարգավիճակը վերահաստատած Հ. Յ. Դաշնակցութեան հրահրելին, պր. Այալայ առաջին անգամ ըլլալով գտնուեցաւ Հայաստան:

Ենթադրելով ընկերվար շատ կարճ ժամանակամիջոց էր Հայաստանի իրականութեան մօտէն ծանօթանալու համար: Բայց թէ՛ մինչեւ այցը Հայաստանի վերաբերեալ տարիներու ընթացքին Դաշնակցութեան ճամբով իր հաւաքած տեղեկութիւններով, թէ՛ այցելութեան ընթացքին կիրարկուած հանդիպումներու, քննարկումներու եւ մամուլային աուսուլներու խիտ ու համապարփակ ծրագրով՝ Ընկերվար Միջազգայնականի ընդհ. քարտուղարը եւ բաւականաչափ ճանաչողութիւն ձեռք բերեց, եւ լսելի դարձուց Հայաստանեան հարցերու նկատմամբ մօտեցման ու արժեւորման շահեկան դիտանկիւն մը:

Ուշագրաւ առաջին ու կարեւորագոյն երեւոյթը, անկասկած, Հայաստանի արժէքն ու կարեւորութիւնը յայտնագործողի այն խանդավառութիւնն էր, որ պր. Այալայի կողմէ հետեւողականօրէն դրսեւորուեցաւ գրեթէ բոլոր հանդիպումներուն եւ ելոյթներուն ընթացքին: Միջազգայնականի ընդհ. քարտուղարը փաստօրէն առիթն ունեցաւ անձամբ հաստատուել, թէ ընկերվար-ժողովրդավարութեան սնունդած արժէքները՝ ընկերային արդարութեան պահպանումը, մարդ անհատի եւ հասարակութեան բազմակողմանի զարգացման ապահովումը եւ մաքուր ձեռքբերով կատարման հասնելու բարոյականութիւնը որքան խոր պարտանք արձակած է ինքնուրոյն զարգացում ապրած են Հայաստանի ու հայ ժողովուրդին մէջ: Լուի Այալայի գնահատումով, տարբերելով խորհրդային տարածաշրջանի այլ երկիրներէն ու ժողովուրդներէն, որոնք տակաւին կը դժուարանան թօթափելու խորհրդային ամբողջատիրութեան ժառանգուած բազում կապանքներ ու այլասերումներ, Հայաստանն ու հայը նկատուելի կենսունակութիւնն ու արագաշարժութիւնը կը ցուցաբերեն՝ ազգային իրենց արժաններուն վերագնահատելու եւ միջազգային իրականութեան մայր հունին մէջ սեփական տեղը գտնելու առումներով:

Այսինքն՝ Ընկերվար Միջազգայնականի ընդհ. քարտուղարին համար նաեւ պարզ դարձաւ, որ միայն պատմական արձանագրութիւնն է, այլեւ այժմեական հնչեղութիւնն ունի այն ճշմարտութիւնը, որ ինչպէս 19րդ դարավերջին ու 20րդ դարու սկզբնաւորութեան, այնպէս եւ 21րդ դարաշրջանի սեմին Հայաստանն ու հայ ժողովուրդը կը հանդիսանան ամբողջ տարածաշրջանի յառաջապահ՝ իբրեւ ժամանակի ամէնէն յառաջադէմ գաղափարներուն հետ քայլ առնելու եւ սեփական հոգեկերտուածքով ընդհանրական արժէքները հայացնելու ազգային ընդունակութեան ժառանգորդները:

Տարբեր չէ կրնար ըլլալ, որովհետեւ պատմական փորձով հաստատուած ճշմարտութիւնն է, որ մինչեւ 19րդ դարավերջ կ'երկարի Դաշնակցութեան իբրեւ հայ ժողովուրդի յառաջադէմ գաղափարներու դրօշակիր կուսակցութեան կապերը Ընկերվար Միջազգայնականի հետ: Սկիզբէն իսկ Միջազգայնականի մէջ Դաշնակցութիւնը տեսաւ ժամանակի ամէնէն յառաջիմական կուսակցութիւններն ու գաղափարական շարժումները համախմբող ուժը, որուն անդամակցութեան ճամբով աշխատեցաւ թափ տալ Օսմանեան եւ Յարական կայսրութեանց միջեւ մասնատուած, ազատագրուած ու գերեզմարեալ Հայաստանի ազատագրութեան եւ հայ ժողովուրդի հոգեհարազատ արժէքներուն պահպանման ու պաշտպանութեան պայքարին: Եւ պատահական չէր, որ Միջազգայնականի ատենի ղեկավարութիւնը յատուկ արժեւորման ենթարկեց Հ. Յ. Դ. անդամակցութիւնը թէ՛ Միջազգայնականի ուսուստանեան հաստատութիւններուն շարքին Դաշնակցութեան ինքնուրոյն մասնակցութեան տեղը ճանչնալով, թէ՛ Օսմանեան կայսրութեան ընկերվար-ժողովրդավարական եւ ընդհանրապէս յառաջիմական ուժերը ներկայացնելու բացառիկ կարգավիճակ շնորհելով Դաշնակցութեան:

Միջազգայնականի այժմու ընդհ. քարտուղարին Հայաստան այցը, հետեւաբար, եկաւ նորովի հաստատելու եւ Հայաստանի ու հայ ժողովուրդի յառաջապահ արժէքն ու կարեւորութիւնը տարածաշրջանին ներս, եւ համապատասխանաբար Դաշնակցութեան վիճակուած առաքելութիւնը՝ իբրեւ դրօշակիր մէկ կողմէ Միջազգայնականի մէջ Հայաստանի ու հայրենիքի իրաւունքներուն եւ շահերուն պաշտպանութեան, իսկ միւս կողմէ հայ իրականութեան մէջ ընկերվար-ժողովրդավարութեան ամբողջութեան:

Ընկերվար Միջազգայնականի ընդհ. քարտուղարին Հայաստան այցը ուշագրաւ էր, նաեւ, այժմեական եւ քաղաքական նշանակութեան առումով:

Չուզողիպէտով Հայաստանի նոր աւարտած նախագահական եւ արդէն թափ առած խորհրդարանական ընտրութիւններուն՝ միջազգային բեմահարթակի վրայ մեծ կշիռ ներկայացնող այս կազմակերպութեան ընդհ. քարտուղարը բազմիցս զօրակցութիւն յայտնեց Հայաստանի անխտիր բոլոր ժողովրդավարներուն, որոնք աշխուժօրէն կը պայքարին մեր երկրին մէջ ժողովրդավարութեան կայացման եւ ամբողջական համար, հակառակ փոխանցման շրջափուլ ապրող հասարակութեանց յատուկ եւ Հայաստանի պարագային շրջափուլման պատճառով աւելուող շեշտուած դժուարութիւններուն եւ խոչընդոտներուն: Լուի Այալայ անձամբ հաստատած էր, որ ընտրութեանց տարբեր փուլերուն պարզուած թերութիւնները, խախտումները եւ չարաշահումները

արագբերու ուժեղ կամք գոյութիւն ունի Հայաստանի ժողովրդավարներուն մօտ, աւելին՝ օրինական եւ սահմանադրական ճանապարհով անհրաժեշտ սրբազրուներուն հասնելու ողջունելի յանձնառութիւն: Այս առնչութեամբ Այալայ ընդգծեց, որ Միջազգայնականի ընդհանուր քարտուղարութեան ստացած զեկոյցներուն համաձայն, ընտրախախտումները չեն ունեցած այնպիսի տարողութիւն, որ խեղէին ընտրազանգուածի մեծամասնութեան կատարած ընտանքը: Այսուհանդերձ Միջազգայնականի ընդհ. քարտուղարը շեշտեց ընտրական համակարգի թերութիւններն ու խախտումները աստիճանաբար սրբազրուելու հրահրականը: Առ այդ, ընդգծելով հանդերձ, որ գոհարար ու խուճեթով լեցուն է այդ ճանապարհը, Այալայ համոզում յայտնեց, թէ հետեւողական պայքարով կարելի է արմատապէս բարելորջել կացութիւնը եւ խոստացաւ իր կազմակերպութեան հնարաւորութիւնները տրամադրել ի պատ ժողովրդավարական բարելորդումներուն:

Ընդհանրապէս ընկերվար-ժողովրդավար շարժումի յայտուած գաղափարական արեւելումը ներկայացնելու առումով ուշագրաւ էր Միջազգայնականի ընդհ. քարտուղարին գնահատականը Հայաստանի Ազգային ժողովի ընտրութեանց համար Հ. Յ. Դ. Դաշնակցութեան պատմաւարներուն համամասնական ցուցակին վերաբերեալ: Թէ՛ իր մասնաւոր հանդիպումներուն, թէ՛ մամուլային աուսուլներուն եւ թէ՛ հրատարակային միւս ելոյթներուն ընթացքին Լուի Այալայ աւելի քան բնական, հիմնաւոր եւ ընկերվար-ժողովրդավարութեան հայտարարած ուղղութեան հետ հաշտ ու դրական գտաւ խորհրդարանական ընտրութեանց ընդգրկուած ցուցակով մասնակցելու Դաշնակցութեան որոշումը: Միջազգայնականի ընդհ. քարտուղարին համոզումով, յատկապէս 21րդ դարուն ընկերվարութիւնը աւելիով բարոյական պարտաւորութեան տակ է բացուելու ընկերվարութեան բոլոր խաւերուն, որպէսզի ապահովէ բոլորին նախկցութիւն հասարակութեան համոզումով, յատկապէս 21րդ դարու ընկերվարութեան հիմնական գործին: Լուի Այալայ կարեւորութեամբ շեշտեց, որ ոչ միայն աշխատաւորութեան, այլեւ հասարակութեան բոլոր լայն խաւերուն համար ընդհանուր պահանջ դրուած են յայլեւ ժողովրդավարութեան ամրապնդումը, մաքուր ձեռքբերով կատարման ապահովումը, ընկերային բեւեռացման յաղթահարումը եւ հասարակական համոզման համոզումով հաստատումը՝ շուկայական տնտեսութեան ընկերային հակակշռումով եւ նիւթեղէն ու հոգեմտաւոր բարիքներու արդար բաշխման գրուածքները կիրարկումով: Ընդհանրապէս ընկերվար-ժողովրդավար շարժումը եւ այս պարագային Դաշնակցութիւնը կոչուած են տէր կանգնելու այդ ուղղութեամբ յառաջապահ իրենց կոչումին:

Անտեղի չէ եզրափակել ու շեշտել, որ Ընկերվար Միջազգայնականի ընդհանուր քարտուղարին Հայաստան այցը այս բոլոր առումներով կարեւոր սկիզբ մը եղաւ, որ անկասկած կ'ունենայ աշխուժ զարգացման իր անդրադարձը՝ Հայաստանի եւ հայրենիքի նորովի յայտնագործուած արժէքն ու կարեւորութիւնը տարածաշրջանին ներս արմատաւորելու ուղղութեամբ:

«ԳՐՈՇԱԿ», 2003 Մարտ

ԱՅՇԻԼ AFHIL
ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆՍՅՈՒՆ
ՄԱՐՔԵՐՈՒ ՄՈԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ
AT HOME
• Wheelchair
• Walker
• Electric Bed
• Manual Bed
• Water Mattress
• Cans
• Sticks
• Serum Tripod
• Walking Frame
RENT AND SALE
HOME MEDICAL EQUIPMENT SERVICES
• Over Bed Table
• All Kinds Of Oxygen
We Also Provide
• Laboratory service.
• Physiotherapist
• Nurses Aids
• P.T.S. (AMBULANCE)
ՅՈՒՑԱՍՈՐԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ
ԳՐԱՍԵՆՏԱԿ՝ ԱՅՇԻԼ, ԱՅԵՏԻ ՇԵՆՔ, Բ. ՅԱԿ
ԳՆՈ. (021) 242558/7
NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.
ԴԻՄՈՒՄԸ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՒՑԵՐ

Լիբանանեան կեանքի երևոյթներ

ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆԸ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՕՐԷՆ ՄՈՒՏՔ ԿԸ ԳՈՐԾԷ ԳՐԵԹԷ ԲՈԼՈՐ ԼԻԲԱՆԱՆՅԻՆԵՐՈՒՆ ՏՈՒՆԵՐԸ, ԱՌԱՆՑ... ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Լիբանան աշխարհին ծանօթ է իրրեւ Միջին Արեւելքի ամէնէն զարգացած ու բարգաւաճած երկիրներէն մէկը:

Կեդրոնական Պէյրուսը իր շքեղութեամբ, ճաշարաններով, գիշերային զբօսավայրերով, շողացող լոյսերով, մաքուր սայլատակով հպարտութիւն կ'առնէ լիբանանցիներուն:

«Տեսար, Պէյրուսն ու Լիբանանը որքան զարգացած եւ գեղեցկացած են», հարց կու տայ լիբանանցի մը՝ երկար տարիներէ ի վեր Լիբանանէն հեռացած իր ընկերոջ, սակայն ան բնաւ չի խօսիր Պէյրուսը շրջապատող այն վայրերուն մասին, ուր ահաւոր աղքատութիւն եւ խեղճութիւն կը տիրէ:

Պէյրուսը գեղեցիկ է, սակայն չի նշանակեր, թէ այդ երեւոյթով սահմանուած ու ներկայացուած է լիբանանցիներուն իրավիճակը եւ ապրելակերպը: Պէյրուսի յատկապէս որոշ արուարձաններու մէջ ճիշդ հակառակ պատկեր կը պարզուի՝ հին ու պատերազմի ուժերուն դրոշմը կրող եւ վայրկեանէ վայրկեան փելու վտանգին ենթակայ շէնքերով, կուպրագուրկ ու կոյուղիի ջուրերով ողողուած փողոցներով, «չարժական խանութներով», աղբերով լցուն անկիւններով եւ ապականած կենսոլորտով:

Պատերազմին յաջորդող տարիներուն աղքատութիւնը սկսաւ հետզհետէ սպրդիլ լիբանանցիներուն տուններէն ներս եւ քաղաքացիները սկսան անդրադառնալ, որ թէեւ գործերը սկսած են բնականոն ձեւով ընթանալ, սակայն անոնք հազիւ թէ կրնան ապահովել իրենց օրուան հացը: Պատերազմի շրջանին, գարմանալիօրէն, հակառակ անգործութեան եւ տիրող վատ պայմաններուն, լիբանանցին այս կամ այն ձեւով կը դարձնէր օրուան էջերը եւ կուշտ փորով անկողին կը մտնէր. սակայն ուժերու դադարէն ետք, ան զգաց, թէ հակառակ օր ու գիշեր վազվզելուն, ան հազիւ կրնայ համեստ կեանք մը ապրիլ: Պատերազմը փաստօրէն մեծապէս վնասեց լիբանանցիներուն, զանազան մարզերու մէջ: Անոնք այդ շրջանին ծախսեցին այն գումարները, որոնք պահք դրած



կր դառնայ: Այսօր կան ընտանիքներ, որոնք զրկուած են նոյնիսկ տարրական սնունդէն: Քիչ չէ թիւը այն մանուկներուն, որոնք միայն ապականած ջուրը խմելով անկողին կը մտնեն, այն խոստովով, որ յաջորդօրը հաց պիտի ունենան: Այդ մանուկները փրկուած կը նկատուին, եթէ «կեանքի ասպարէզ» նետուին... մուրալու:

«Կ'ապրինք, սակայն մի՛ հարցընէք, թէ ի՛նչպէ՞ս», կ'ըսեն Պէյրուսի շրջակայ աղքատ վայրերուն մէջ ապրող քաղաքացիներ, որոնց «տուն»երը չեն կրնար պաշտպանել հովէն, փոթորիկէն անձրեւէն ու պաղէն:

Առաւել, հոն կը տիրէ խոնաւութիւն, ապականութիւն եւ մարդոց մէջ աւելի սարդեր եւ միջատներ «կը բնակին» հոն: Տակաւին կան կարգ մը շրջաններ, որոնք մոռցած են, թէ ջուրը ծորակէն կը հոսի եւ անոնք գայն կը բերեն շրջանին մէջ գետերու ճանրային խողովակէ մը:

«Ամուսինս դիտարկեցի քանի մը տարի անգործ մնայի եւ օրն ի բուն գործ փնտրելիս ետք, ունիմ չորս երեխայ, կ'աշխատիմ եւ ջանք կը թափեմ, որպէսզի անոնք փողոցը չմնան. ամուսինս ցարդ ոչ մէկ լուր ստացայ, փոքր մանչուկս կը տառապի շնչառութեան լուրը հարցերէ եւ ես անկարող եմ զեղերը ապահովելու եւ կամ աւելի առողջարար վայր մը փոխադրելու գայն. կը տառապիմ ու զաւակներս եւս կը տառապին. կարծէք ամէն օր կ'ապրիմ այն վայրով, թէ մահը կրնայ ըմբռնուիլ մեր գոլ...»:

ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ ՀՆՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Բնակչութեան ընդհանուր թիւ՝ 4.005.025

ԱՆԳՈՐԾՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ

ԱՅՐԵՐ՝	94.048
ԿԻՆԵՐ՝	22.011

ԱՊԱՀՆՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ, ՉՈՒՆՏՅՈՒՆՆԵՐ

ԱՅՐԵՐ՝	16.305
ԿԻՆԵՐ՝	352.442

սինէս ցարդ ոչ մէկ լուր ստացայ, փոքր մանչուկս կը տառապի շնչառութեան լուրը հարցերէ եւ ես անկարող եմ զեղերը ապահովելու եւ կամ աւելի առողջարար վայր մը փոխադրելու գայն. կը տառապիմ ու զաւակներս եւս կը տառապին. կարծէք ամէն օր կ'ապրիմ այն վայրով, թէ մահը կրնայ ըմբռնուիլ մեր գոլ...»:

«Մայրս հիւանդ է, ես կ'աշխատէի եւ անոր զեղերը կ'ապահովէի. ընկերութեան փակումէն ետք անգործ եմ, կը փնտրեմ որեւէ գործ եւ պատրաստ եմ ամէն ինչ աշխատելու, սակայն տակաւին ոչինչ գտայ: Չեմ կրնար զեղ բերել մօրս եւ մեծ դժբախտութեամբ ու ցաւով կը հսկեմ անոր մահուան»:

Նման արտայայտութիւններ եւ վախեր առկայ են մեծ թիւով լիբանանցիներու մօտ, որոնք եթէ նոյնիսկ այս վիճակին մէջ չեն գտնուիր, կ'ապրին լոկ օրուան հացը ապահովելու համար, օր ու գիշեր ճգնելով եւ սակայն ոչ մէկ ձեւով յառաջդիմութիւն արձանագրելով:

90ական թուականներուն լայն արշաւ կազմակերպուեցաւ միջազգային կազմակերպութիւններու կողմէ, որպէսզի աղքատութեան դէմ պայքար տարուի եւ անիկա կարելի եղածին չափ նուազի: Սակայն այսօր իրողութիւնը ցոյց կու տայ, թէ այդ փորձը չէ յաջողած, որովհետեւ Լիբանանի պայմանները չեն օգնիր այդ արշաւին: Լիբանանցիներուն գանձած ամսականներուն եւ ամիսը անոնց ունեցած նուազագոյն ծախսերուն միջեւ արդէն մեծ բաց գոյուլթիւն ունի: Պարզ քաղաքացին կը գանձէ այնքան, որքան ինք կ'ապրեցնէ հազիւ 10 - 15 օր: Հապա՞ մնացեալ 15 օրերը...:



Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, թէ վերջին քանի մը տարիներուն մարդիկ միայն ուսեստեղէն կը սպառեն եւ հեռու են իրրեւ հաճոյք ու նախաիրութիւն գնումներ կատարելէ: Այս ետզարձի գործընթացին «կը նպաստէ» նաեւ սղաճը, պետութեան



էին, անոնց տուններն ու խանութները քանդուեցան, գործերը կաղացին կամ լրիւ անշարժացան եւ կեանքի բնական ընթացքը խախտեցաւ:

Պատերազմէն ետք ամէն ինչ պէտք է ոչինչէն սկսել եւ վերականգնել: Այս մէկը բաւական դժուար եղաւ քաղաքացիներուն համար եւ անոր հետեւանքները տակաւին մինչեւ օրս կան ու հետզհետէ կը զարգանան: Այս գործընթացին մեծապէս «կ'օժանդակէ» Լիբանանի տնտեսական եւ ընկերային վատ վիճակը, որուն պատճառով օրէ օր կը բարձրանայ երկրին աղքատութեան մակարդակը եւ այն անհաստեղութիւն եւ ընտանիքներուն թիւը, որոնք ապրուստի ընդունւած սահմաններէն շատ աւելի վար մակարդակի կ'ապրին եւ նոյնիսկ տեղ չունին պատասպանելու:

